

«Նոր ժամանակի կրթություն»

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների
իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում*

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Լաուրա Ստեփանյան

*Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ ք. Մասիս հ.3
հիմնական դպրոց*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ	4
ԳԼՈՒԽ 1	
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	6
ԳԼՈՒԽ 2	
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	9
ԳԼՈՒԽ 3	
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ . .	10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
. 14	
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ: Չնսեմացնելով տեսական հիմնարար գիտելիքների դերը՝ կրթության մեջ մեծ կարևորություն են տալիս ուսուցման պրակտիկ ուղղվածությանը: Ուշադրություն դարձնել այն գիտելիքներին ու կարողություններին, որոնք մենթադրվում է, որ կիրառություն կգտնեն գործնական կյանքում: Դեպի պրակտիկան կողմնորոշված ուսուցման գաղափարն արդեն ներառվել է Ռուսաստանի կրթական նորմատիվ փաստաթղթերում: Ուսուցման պրակտիկ ուղղվածությունը կարևորվում է ոչ միայն ստացած գիտելիքների մնայունության ապահովման և կենսական տարբեր իրադրություններում նրանց կիրառման տրամաբանությամբ, այլ նաև սովորողների մեջ կայուն ուսումնական մոտիվացիա ձևավորելու անհրաժեշտությամբ: Գաղտնիք չէ, որ բնական գիտությունների հանդեպ սովորողներն ակտիվ հետաքրքրություն չունեն: Հետաքրքրությունների սպեկտրը նկատելի չափով ձևավորում են աշխատանքային շուկան, գովազդը և բարձր աշխատավարձը: Մինչ աշխարհի հանդեպ երեխաների բնատուր հետաքրքրությունը, որում խամրում է: Ուսուցման կիրառվող տեխնոլոգիաներն հնարավորություն չեն տալիս սովորողին գիտակցել իրենց հակումներն ու ընդունակությունները, իրենց ինտելեկտուալ ներուժը, ինչի հետևանքով էլ ապագայի կողմնորոշիչներ են դառնում երկրորդական նշանակության գործոններ: Դեպի պրակտիկան կողմնորոշված ուսուցումը նպատակ ունի գիտելիքները կապելով փորձերի, կյանքի հետ դրանք առավել հետաքրքիր դարձնել: Նման պարագայում սովորողը հասկանում է իր ձեռք բերած գիտելիքների կենսական նշանակությունն ու իմաստը, ասել է թե՛ ապահովվում է գիտելիքների իմաստավորված յուրացում: Իմաստալից, անձնային նշանակություն ստացած գիտելիքը մոտիվացիոն հզոր գործոն է և կարող է սովորողների ապագա մասնագիտական կողմնորոշման մեջ արդեն լուրջ դերակատարում ունենալ: Գործնական աշխատանքը դպրոցում բավականին մեծ դեր և նշանակություն ունի: Այսպիսի աշխատանք կատարելիս սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի և պատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Այն դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Տարրական դասարանում գործնական աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ: Ուսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել, բայց դա դեռ ամբողջական պատկերը չէ:

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Չանգակ» հրատարակչություն, 2014 թ., էջ 65,

Հետազոտության նպատակը՝ բացահայտել գործնական աշխատանքների էությունն ու կարևորությունը:

Հետազոտության խնդիրները՝ ուսումնասիրել թեմային առնչվող գրականությունը, հրականացնել գործնական աշխատանքներ,

Գրանցել արդյունքները և բացահայտել դրանց կազմակերպման սխեման առարկայի դասավանդման ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսումնասիրելով մանկավարժության պատմությունը, ծանոթանալով հայ և օտար ազգերի մանկավարժների հայացքներին, առաջադրած սկզբունքներին, մեթոդաբանությանը՝ առանձնացրել ենք մի քանիսին, ովքեր ուսումնառության մեջ կարևորություն են տվել գործնական աշխատանքներին: Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի: Նա գտնում էր, որ հարկավոր է ուսուցման ընթացքում ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների գործնական ուղղվածությանը և զարգացնել դրանք: Թ. Մորին, Թ. Կամպանելլային, Սեն-Սիմոնը, Շ. Ֆուրյեին, Ռ. Օուենին այն կարծիքին էին, որ ճիշտ դաստիարակության միջոցով կարելի է ստեղծել բավականության և արդարացիության սկզբունքների վրա հիմնված հասարակություն, սակայն ուշադրության կենտրոնում հարկավոր է պահել գործնական ուղղվածությունը:

Ե. Ա. Գոլանտը, Ս. Ի. Պերովսկին ուսուցման մեթոդները դասակարգել են երեք խմբերում՝ խոսքային, զննական և գործնական: Դասակարգելիս հիմք են ընդունել ինֆորմացիայի ըմբռնման բնույթը:

Մ. Սկատկինը և Ի. Յա. Լերները հիմք ընդունելով կրթության բովանդակության յուրացման մեջ սովորողների իմացական հնարավոր բնույթը,

առանձնացրել են ուսուցման հետևյալ մեթոդները՝ բացատրական- ցուցադրական, ինֆորմացիոն-ռեցեպտիվ, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանք, մասնակի որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական:

Պատահական չէ, որ մեր հասարակությունը տարրական դպրոցի ուսուցչին է վստահում իր համար ամենաթանկը՝ մեր փոքրիկ քաղաքացիներին և մեր երկրի ապագան, ինչպիսին մանկավարժի աշխատանքի արդյունքն է, այդպիսին էլ կլինի մեր հասարակության վաղվա օրը:

¹ Общие основы педагогики, (под ред Б П Есипова), М. 1967, стр . 89,

² Е. Я. Голант, Е. И. Петровский, Классификация методов обучения, М .,1964, стр. 72,

³ И. Я. Лернер, М. Н. Скаткин, Методы обучения, М . ,1994, стр. 56,

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ: Մանկավարժական գործընթացի կառավարումը նախ և առաջ սկսվում է նպատակի առաջադրումից, սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների հաշվառումից, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել մանկավարժական գործընթացը: Մանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր են նաև մանկավարժական հայտորոշումը և արդյունքների կանխատեսումները, որոնք ուսուցչին տալիս են մեկ քայլ առաջ տեսնելու, սեփական գործունեության արդյունքները նախագծելու հնարավորություն, տեսականը վերածելու գործնականի : Հարկ ենք համարում նշել այն կարևոր հանգամանքը, որ մանկավարժական պատմության ընթացքում առաջատար մանկավարժները կարևորել են գործնական աշխատանքները և առանձնահատուկ ուշադրություն են դարձրել դրանց իրագործմանը:

ԳԼՈՒԽ 1

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գործնական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել գործնական աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում աշխատանքը արդյունավետ կլինի: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում գործնական աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ գործնական աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները և վերջապես նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորվում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքները բազմազան են . պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, տեսածի, լսածի ներկայացում ամենատարբեր միջոցներով, որը կարող է լինել պաստառ, սահիկ և այլն:

Գործնական աշխատանքները կարող ենք իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով, ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:

Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան թույլ է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում գործնական աշխատանքը, եթե իհարկե աշխատանքն ունի անհատական բնույթ: Գործնական աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ, օրինակ՝ բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ: Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում. Սկզբում

աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

Գործնական աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում գործնական աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

Գործնական աշխատանքը կազմելիս ցանկալի է, որ նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին: Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի: Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով:

Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Գործնական մեթոդների շարքում են՝

1. Վարժություններ
2. Գործնական աշխատանքներ
3. Լաբորատոր աշխատանքներ
4. Ճանաչողական խաղեր :

Ժամանակակից աշակերտին անհրաժեշտ են ոչ միայն տեսական գիտելիքներ տարբեր առարկաներից, այլ նաև այդ գիտելիքները աշխատանքային և հոգևոր գործունեության տարբեր ոլորտներում կիրառելու պրակտիկ կարողություններ ու հմտություններ:

Վարժություններ

Վարժությունների մեթոդի դեպքում սովորողները բազմիցս կատարում են միևնույն գործողությունները, այսինքն վարժվում են յուրացված տեսական նյութը պրակտիկայում կիրառելու մեջ, դրանով իսկ խորացնելով իրենց գիտելիքները, ձեռք բերելով համապատասխան կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև զարգացնելով իրենց մտածողությունն ու ստեղծագործական ընդունակությունները:

Կարող են լինել բանավոր կամ գրավոր վարժություններ, պրակտիկ առաջադրանքներ բնագիտական առարկաներից, ստեղծագործական աշխատանքներ լեզվից ու գրականությունից և այլն:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան ձեռք բերած գիտելիքների կիրառումն է գործնական խնդիրների լուծման ընթացքում: Այն նաև լուծում է սովորողների գիտելիքների խորացման ու ամրապնդման խնդիրը:

Աշակերտների կողմից գործնական աշխատանքների անմիջական կատարմանը նախորդում է ուսուցչի բացատրությունը, որը նպատակ ունի տեսականորեն իմաստավորել աշխատանքը և գործողությունների շարքի ցուցադրումը: Դրանից հետո աշակերտները կատարում են աշխատանքը, իսկ ուսուցիչը վերահսկում է նրանց գործողությունները:

Լաբորատոր աշխատանքներ

Լաբորատոր աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողների մեջ գիտափորձարարական հետազոտական աշխատանքի տարրական կարողություններ ձևավորելն է:

Լաբորատոր աշխատանքները սովորեցնում են աշխատել տարատեսակ սարքերի և նյութերի հետ, ձևավորում են չափումներ, հաշվարկներ կատարելու փորձի արդյունքներն ամփոփելու, վերլուծելու և եզրակացություններ անելու կարողություններ:

Ճանաչողական խաղեր

Որպես ուսուցման մեթոդ խաղը իրականության մոդելավորման մի ձև է, հատուկ կազմակերպված իրադրություն, որից սովորողներին առաջարկվում է ելք գտնել:

Խաղի մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողի ճանաչողական գործունեությունը իրականությանը մոտեցնելն է : Այս խաղերը լայնորեն կիրառվում են հատկապես օտար լեզուների և գրականության դասավանդման, ինչպես նաև համակարգչային ուսուցման պրոցեսում:

ԳԼՈՒԽ 3

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 4-րդ

Դասի թեման – Ծանոթություն **գոյական** խոսքի մասին (1 դասաժամ)
Դասի նպատակը՝ ստեղծել գիտելիքների հիմնավոր պաշար թեմայի վերաբերյալ, ստացած տեսական գիտելիքներն ամրապնդել գործնականորեն:

Երեք աշակերտի հրավիրում ենք գրատախտակի մոտ և հանձնարարում նախապես գծված սյունակներում լրացնել համապատասխան բառեր: Այնուհետև պարզել, թե ինչ հարցի են պատասխանում գրված բոլոր բառերը: Կամ կարելի է նույն գծապատկերը այլ խմբավորում ունեցող սյունակաշարով ներկայացնել, օրինակ՝ ներկայացնել *ո-ձև* աղյուսակով:

բույսեր	թռչուններ	կենդանիներ

Այնուհետև հարց է ուղղվում դասարանին, թե ինարավոր է, որ առանձին սյունակներում գրված որոշ բառեր ինչ-որ ժամանակ եղել են բոլորովին այլ սյունակում կամ ինչ-որ ժամանակ անց, կամ գուցե որոշակի իրադրություններում տեղափոխվեն այլ բաժիններ, այսինքն՝ երկնային ոլորտի որևէ բառ երբևէ տեղ գտնի ցամաքային ոլորտում կամ պարզվի, որ ջրային ոլորտի ինչ-որ առարկաներ երբևէ պատկանել են ցամաքային ոլորտի: Կարելի է հուշել, օգնել, որ տրամաբանորեն պատասխանեն: Չէ՞ որ օվկիանոսներում կան շատ ծառեր, կան ցամաքային և ջրային կրիաներ: Ուրեմն՝ ի՞նչ սկզբունքից ելնելով ենք նման տարբերակումներ անում: Բացատրում ենք, որ խմբավորումներ առանձնացնելիս հիմնվում ենք օրինաչափությունների և ոչ թե բացառությունների վրա:

Այնուհետև պարզում ենք, որ գրված ու թվարկված բոլոր բառերը պատասխանում են **ի՞նչ** և **ո՞վ** հարցերին. ուրեմն կարո՞ղ ենք ամրագրել, որ **գոյական** են կոչվում **ո՞վ** և **ի՞նչ** հարցերին պատասխանող բառերը: Արդյոք սա բավարար է բոլոր այդ բառերը գոյական համարելու համար: Ոմանք կպատասխանեն՝ այո. ոմանք՝ ոչ, սակայն հիմնավորելու համար պահանջում ենք փաստեր բերել: Օրինակ՝ **ես**, **ոչ մեկը** բառերը ևս պատասխանում են **ո՞վ** հարցին, սակայն գոյական չեն: Ուրեմն՝ հարցերին պատասխանելը դեռևս բավարար պայման չէ: Գուցե **գոյական** անո՞նք մեզ ինչ-որ բան հուշի, այսինքն, գոյություն ունեցող

բոլոր բառերը համարենք *գոյական*: Այդ դեպքում յուրաքանչյուր մարդ, **ես** ասելով, բնականաբար չի կասկածում, որ ինքը գոյություն ունի, ուրեմն գոյություն ունենալու փաստն էլ դեռ բավարար չէ:

Այնուհետև փորձում ենք այլ կողմից քննել երևույթը: Ձևավորում ենք խմբեր և առաջադրում հարցեր.

I, III խմբեր - Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք գոյություն ունեցող բոլոր առարկաներն ու երևույթները անվանում ունեն. հիմնավորել կարծիքը: (*ակնկալվող պատասխան* - այո՛, տիեզերքում, ընդերքում, նույնիսկ ցամաքի վրա շարունակ բացահայտվում են նոր երևույթներ, հայտնաբերվում են նոր առարկաներ, որոնք անվանում են ստանում, սակայն դեռևս կան շատ-շատերը, որոնք գոյություն ունեն, սակայն հայտնաբերված չեն, ուստի և անվանում չունեն:)

II, IV խմբեր – Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք անվանում ունեցող բոլոր առարկաներն ու երևույթները գոյություն ունեն. հիմնավորել կարծիքը: (*ակնկալվող պատասխան* – այո՛, եթե անվանում ունեն, ուրեմն **գոյական** են, կապ չունի, այժմ անհետացա՞ծ են, գոյություն ունեն մեր մտապատկերներո՞ւմ, թե՞ կասկածի տակ է նրանց գոյության փաստը:)

Աշխատանքին հատկացվում է 2-3 րոպե, որից հետո լսում ենք հիմնավորումները: Խմբերը կարող են լրացնել միմյանց: Չրույցը կարող է վերածվել բանավեճի, ուստի պետք է վերահսկել ժամանակը և ուղղորդող հարցերով մոտեցնել խնդրի հասկացմանը:

Ուրեմն՝ ի՞նչ հետևության կարող ենք հանգել այսքանից հետո:

Մենք պարզեցինք, որ գոյականները պատասխանում են **ո՞վ** և **ի՞նչ** հարցերին, սակայն բավարար չէր: Պարզեցինք, որ ընդհանուր իմաստ արտահայտող գոյականները խմբավորվում են (տե՛ս՝ գծապատկերներ): Այնուհետև արձանագրեցինք, որ անվանում ունեցող բոլոր առարկաները, երևույթներն ու հասկացությունները գոյականներ են: Ուրեմն՝ սահմանումը կարող են սովորողներն իրենք տալ: Եվ մի կարևոր հուշում՝ քերականության մեջ գոյություն ունեցող ամեն ինչ անվանում ենք *գոյական*՝ լինի երևո՞ւյթ, թե՞ հասկացություն, միևնույնն է, քերականության մեջ նրանք մի անվանում ունեն՝ **առարկա**: Ահա այս դեպքում ամեն ինչ իր տեղն է ընկնում:

Այսքանից հետո տրվում է տնային առաջադրանք: Դասագրքից հանձնարարվում են թեմային առնչվող վարժություններ, այնուհետև՝ երկու սյունակներում գրել առանձին խմբերի պատկանող գոյականների անվանումներ, օրինակ՝ բանակին, թոնրին, աշխատասեղանին, երկրաչափությանը, համակարգչին, ֆիզիկային և այլնին առնչվող բառեր:

ԱՆՁՆԱՆԻՇ ԵՎ ԻՐԱՆԻՇ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Դասի թեման – Անձնանիշ և իրանիշ գոյականներ (1 դասաժամ)

Դասի նպատակը – Տարբերակել անձ և իր ցույց տվող գոյականները, հարստացնել բառապաշարը:

Դասի ընթացքը - Ուսուցիչը ստուգում է նախորդ օրվա տնային առաջադրանքները, պատասխանում է հարցերին, աշակերտների կարդացած նախադասություններից գրատախտակին առանձին սյունակներով գրում է անձնանիշ և իրանիշ գոյականներ, որից հետո առաջարկում է աշակերտներին գտնել այն ընդհանրությունները, ըստ որոնց դասակարգվել են բառերը:

Չկողմնորոշվելու դեպքում առաջարկում է հարց տալ գրված բառերին և ըստ հարցի էլ հիմնավորել դասակարգումը: Ուրեմն **ո՞վ** հարցին պատասխանող բառերը կոչվում են անձնանիշ, իսկ **ի՞նչ** հարցին պատասխանողները՝ իրանիշ:

Այնուհետև առաջարկում է բացատրել *անձ* բառը այլ ձևակերպումներով: Երեխաները կասեն կամ ուսուցիչը կուղղորդի, և կստացվեն հետևյալ տարբերակները՝

ա/ անձի համար՝ մարդ, շնչավոր, խոսելու ընդունակ

բ/ իրի համար՝ առարկա, իր, շունչ չունեցող, խոսել չկարողացող

Ուսուցիչը սովորողների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ կենդանիներին և թռչուններին տրվում է **ի՞նչ** հարցը: Երեխաները շատ ցավոտ են ընկալում այդ փաստը, մանավանդ՝ նրանք, ովքեր տանը կենդանիներ և թռչուններ են պահում (առավելապես մարգերում բնակվողները): Ուստի որպեսզի շատ ցավոտ չընկալվի, հատուկ շեշտվում է, որ այդպես է ընդունված միայն նրա համար, որ մարդն առանձնանա բնության մյուս էակներից: Միայն մարդ արարածին է տրվում **ո՞վ** հարցը: Գեղարվեստական գրականությունից բերվում են օրինակներ, երբ ծառը, ծաղիկը, քարը, որևէ առարկա կարող է լեզու առնել և մարդկային լեզվով խոսել: Բացատրվում է, որ մարդը բնության մեջ ապրող կամ գտնվող ամեն ինչի կարող է իր նման խոսեցնել, և դա կոչվում է **անձնավորում**: Ամեն ինչ կարող է մարդկային կերպարանք ստանալ, բայց այդ ամենը հնարավոր է միայն գրականության մեջ և մարդկային խոսքում, իրականում դրանք առանձին՝ որպես բառեր, չարունակում են պատասխանել **ի՞նչ** հարցին:

Այնուհետև կազմակերպվում է մի հետաքրքիր աշխատանք: Ուսուցիչը յուրաքանչյուր խմբի մի գեղարվեստական գիրք է տալիս և առաջարկում խառը դուրս գրել 20-ական անձնանիշ և իրանիշ բառեր և փոխանցել մյուս խմբին՝ կատարելու: Յուրաքանչյուր խումբ աշխատում է գտնել այնպիսի բառեր, որոնց իմաստը մյուս խումբը դժվարանա գտնել, ուստի և չկողմնորոշվի՝ իրանի՞շ է, թե՞ անձնանիշ:

Այնուհետև այդ բառերը դասակարգվում են՝ ըստ իմաստային խմբերի: Այսպես, օրինակ՝

Դասակարգել տրված բառերը՝ ըստ տրված խմբերի և անձնանիշ գոյականները ընդգծել:

Սկուտեղ, բուժակ, սաղավարտ, եպիսկոպոս, քերիչ, տեգ, խառատ, հարիչ, տավիղ, բրիչ, վարդապետ, տապակ, աշտանակ, հնէաբան, բրուտ, որմնադիր, կաթսա, ջուլիակ, սվին, կաթողիկոս

Խոհանոցային պարագաներ –

Պատմաբառեր –

Գործիքներ –
Մասնագետներ –
Հայոց եկեղեցու սպասավորներ-

Ուսուցիչը ցույց է տալիս առարկաների և մասնագիտությունների նկարներ և հանձնարարում աշակերտներին՝ անվանել դրանք: (ձախից՝ շաղափ, մուրճ, հարթաշուրթ, գայլիկոն, կիթառ, ակորդեոն, թմբուկ, դիոլ, թառ, բժիշկ, փոստատար, ուսուցիչ, վարորդ, խոհարար, վաճառող, շինարար, վարսավիր, հրշեջ, գորգագործ, կավագործ):

Անվանելուց հետո առանձնացնում են անձնանիշ և իրանիշ գոյականները:

Տրվում է տնային առաջադրանք: Ստեղծել խմբավորումներ և գրել դրանց պատկանող անձնանիշ և իրանիշ գոյականներ:

Կատարել դասագրքի վարժությունները:

Ուսուցչի կարևորագույն գործառնություններից է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը, նախ և առաջ, պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են երկու ձևով: Առաջին՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և անհրաժեշտության դեպքում կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն դրանց համար նախատեսված առանձին տետրերում, որն ուսուցիչն ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Տեղանքում իրականացվող գործնական աշխատանքներն անցկացվում են խմբային մեթոդների կանոններով:

Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.

- Տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը
- Նորովի կամ ստեղծագործական մոտեցումը
- Առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

Տարրական դասարաններում դասերի ընթացքում գերակշռում է ուսուցման ճակատային՝ ֆրոնտալ ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից:

2.

Գործնական աշխատանքի հմտությունները չեն ծագում ինքն իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

3.

Գործնական աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

4.

Գործնական աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

5. Ժամանակի ընթացքում դասերին գործնական

աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող

տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Խաչատրյան Ս. , Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020

www.armedu.am համացանցային կայքը

Общие основы педагогики, (под ред Б П Есипова), М. 1967, стр . 89,

Е. Я. Голант, Е. И. Петровский, Классификация методов обучения, М .,1964, стр. 72,

И. Я. Лернер, М. Н. Скаткин, Методы обучения, М . ,1994, стр. 56,